Funded by the European Union

**Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության հիմնադրամ**




**Իրականացման ժամանակահատված:** 28.06.2021 - 27.04.2028

**ԱլԳ երկրներ:**

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

**ԵՄ ներդրում:** € 7 396 250

**Ընդհանուր բյուջե:** € 7 396 250

**Իրականացնող կազմակերպություն(ներ):**

GDSI Limited (Ireland) in consortium with Altair Asesores S.L. (Spain), Office for European Expertise and Communications (Belarus), Innovative Education Foundation (Georgia), Institute for European Policies and Reforms (Moldova), Center for Innovations Development (Ukraine)

**Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ:** facebook.com/EaPCivilSociety, www.linkedin.com/company/eap-civil-society-facility

**Նախագծի կայքէջ:** eapcivilsociety.eu/

**Նախագծի նկարագրություն:**

Eastern Partnership Civil Society Facility Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող ծրագիր է, որն աշխատում է Արևելյան գործընկերության (ԱլԳ) վեց երկրների հետ՝ ամրապնդելու քաղաքացիական հասարակական կազմակերպությունների (ՔՀԿ) և այս վեց երկրների ակտիվիստների դերը և կարողությունները:

Նախագիծը տարածաշրջանի քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և ակտիվիստներին առաջարկում է.

- Քաղաքացիական հասարակության ուսուցման հնարավորություններ:
- Քաղաքացիական հասարակության ամենամյա հեքեթոններ՝ թափանցիկության, հաշվետվողականության և մասնակցության համար նոր գաղափարներ և գործիքներ մշակելու համար:
- Civil Society Fellowships: Քաղաքացիական հասարակական կրթաթոշակներ՝ տարածաշրջանից 240 քաղաքացիական հասարակական ակտիվիստների աջակցելու համար:
- Տարածաշրջանային համագործակցություն և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցություն համապատասխան տարածաշրջանային և միջազգային միջոցառումներին:
- Ցանցերի ստեղծման աջակցություն (նեթվորքինգ) և համապատասխան նախաձեռնություններին ժամանակին աջակցություն:
- Տեղեկատվական արշավներ՝ քաղաքացիական հասարակական կազմակերպությունների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացմանը, նրանց հանրային իմիջի բարելավմանը և քաղաքացիական հասարակությանը ԵՄ աջակցությունը խթանելուն:

**Ակնկալվող արդյունքներ:**

- ԵՄ-ի խնդրանքով տարածաշրջանում քաղաքացիական հասարակության հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտությունների ամրապնդում:
- Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և ակտիվիստների կարողությունների ամրապնդում՝ քաղաքականության մշակման գործընթացներում և քաղաքականության երկխոսության մեջ ներգրավվելու, բարեփոխումների և հանրային հաշվետվողականության խթանման, տեղական ժողովրդավարության, տեղական զարգացման խթանման և քաղաքացիներին հանրային բանավեճում ներգրավելու համար:
- Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների աշխատանքի հաշվետվողականության և թափանցիկության բարձրացում:
- Արևելյան գործընկերության երկրներում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների իմիջի բարելավում:
- Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչներին տեղեկատվություն տրամադրելը, որը նրանց հնարավորություն կտա ավելի լավ հասկանալ գործընկեր երկրներում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների խնդիրները և պլանավորել ԵՄ-ի կողմից ապագա ֆինանսավորման ծրագրերը:
- Արևելյան գործընկերության երկրներում քաղաքացիական հասարակությանը ԵՄ-ի աջակցության վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացում: